ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 3
ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/55 ծածկագրով
գնման ընթացակարգի նիստի

ք. Երևան «12» հուլիսի 2024թ.
ժամը՝ 12:00

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայր՝ ՀՀ ք. Երևան Կ. Ուլնեցի 31 հասցե, ՀՎՀՀ 0084644, էլեկտրոնային փոստ՝ atdf@atdf.am) գործադիր տնօրենի «08» հուլիսի 2024թ. թիվ 1172/1-Ա հրամանով ստեղծված գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) «ՀՀ Սյունիքի մարզի ք.Կապանի թիվ 10 հիմնական դպրոցի կառուցման» աշխատանքների ձեռքբերման նպատակով **ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/55** ծածկագրով գնման ընթացակարգի նիստին (այսուհետ՝ նիստ) մասնակցում է հետևյալ կազմով՝

Ֆելիքս Սարգսյան ՝ Հանձնաժողովի նախագահ
Ալեքսանդր Ոսկանյան՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Արամ Գալստյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Լուսինե Ղազարյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Վարդինե Իսահակյան ՝ Հանձնաժողովի բացող անդամ
Սոնա Կարապետյան ՝ Հանձնաժողովի բացող անդամ

Նիստը տեղի ունեցավ **2024 թվականի հուլիսի 12-ին:**

Հանձնաժողովը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2093-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 867-Ն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետով որոշվել է՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկը հաստատելու և ցանկում ընդգրկված դպրոցների համար սահմանված շինարարական աշխատանքների՝ կառուցման, վերակառուցման կամ հիմնանորոգման համար միջամտության աստիճանի ընտրության չափորոշիչները սահմանելու մասին» N 2093-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկի 247-րդ տողի 8-րդ սյունակում «Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ» բառերը փոխարինել «ՀՀ քաղաքաշինության կոմիտե» բառերով, միևնույն ժամանակ, նկատի ունենալով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի

հոգաբարձուների խորհրդի 2024 թվականի հուլիսի 11-ի արձանագրությունը, այն է՝ թույլատրել չկայացած հայտարարել հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի «ՀՀ Սյունիքի մարզի ք.Կապանի թիվ 10 հիմնական դպրոցի կառուցման» աշխատանքների ձեռքբերման նպատակով հրապարակված **ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/55** ծածկագրով մրցույթը/գնման ընթացակարգը՝ գնման պահանջի դադարման հիմքով, հանձնաժողովը որոշեց Ընթացակարգը հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի:

Հանձնաժողովի նախագահ՝

Ֆելիքս Սարգսյան _____

անդամներ՝

Ալեքսանդր Ոսկանյան _____

Լիլիթ Պետրոսյան _____

Արամ Գալստյան _____

Լուսինե Ղազարյան _____

Վարդինե Իսահակյան _____

Սոնա Կարապետյան _____

քարտուղար՝

Ալիսա Նիկոլայան _____